

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ԳԵՂՆԱԾ ՓՂՈՍԿՐԸ ՃԵՐՄԿՅԸՆԵԼՈՒ ՀՆԱՐՔ .

Փղոսկրէ (փիլիսիի) գործուածքները ժամանակ անցնելով կղեղնին . ասոնց առաջին ցերմրկուծիւնը եւ յստկուծիւնը տալու համար՝ առաջ լաւ մը սապոնէ՛, յետոյ տաք ջրի մէջ դիր եփէ, պաղեցուր . անկից հանէ փղոսկրը՝ պաղ ու մաքուր ջրի մէջ ցողուէ, եւ չոր չոր սրբէ :

Մէկ հնարքն ալ այս է . փղոսկրեղէնը կրաջրի մէջ եփէ (որ է *firka unjra*), անով կ՛ցերմկնան :

ՄԱՆՐ ՈՍԿԵՂԵՆՆԵՐԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՀՆԱՐՔ .

Յայտնի բան է որ ոսկեղէն զարդարանքները սովորաբար զուտ ոսկիէ շինուած չեն լինիր, հապա շատ կամ սակաւ խառնուրդ կունենան դեղին պղնձէ . այս պատճառաւ ոսկեղէնը ժամանակ անցնելով կմծրնայ ու առաջին գոյնը կկորսընէ : Այսպիսի զարդարանքները ինչպէս որ պէտք է մաքրելու համար՝ պէտք է անուշադրը (*նրչասր*) ջրի մէջ լուծել, ոսկեղէնը մէջը ձգել ու եփ հանել . անուշադրին ուժովը զարդարանքին վրայ եղած աղտը կլուծուի, եւ ոսկին բոլորովին կմաքրուի :

ԱՊԱԿԻ ԱՄԱՆՆԵՐԸ ՏԱՔԷ ԿԱՄ ՊԱՂԷ ՃԱԹԵԼԷՆ ՊԱՀԵԼՈՒ ՀՆԱՐՔ .

Ապակիէ ամանները, այսինքն մանր ու խոշոր գաւաթներ, շիշեր, եւ ուրիշ անոթներ, շատ անգամ յանկարծական տաք ջրի կամ սաստիկ պաղի որ հանդիպին՝ կ՛ճաթին կկտրտին : Ասոր ցարն է ապակիէ ամանները պաղ ջրի մէջ դնել ու կամաց կամաց տաքցընել՝ մինչեւ որ ջուրը եփ ելնէ, ու հինգ վայրկեանի չափ ալ եփի . յետոյ կրակը մարէ ու ձգէ որ ջուրը կամաց կամաց պաղի, եւ անկից ետքը ապակիները հանէ մէջէն : Այս կերպով ապակեղէնները կվարժին տաքէն պաղի ու պաղէն տաքի յանկարծակի անցնիլ՝ առանց կտրտելու : — Ենէ ապակեղէնները շատ են, կրնաս անոնք յարգով կամ խոտով փամփել որ ջրին եփ ելած ատենը մէկմէկու չզարնուին : Խալկինին մէջ ջուրը պէտք է երեք չորս մատ ծածկէ ապակիները : Ենէ ուզես ջրին տաքութեան աստիճանն աւելցընել՝ կրնաս մէջը քիչ մը աղ ալ ձգել :

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ .

Ե .

*Ո՛րք են արդեօք այն քերթողներ ,*

*Ոտանաւոր շարագրողներ ,*

*Որ կազ ստքով ,*

*Վրսեմ մըլաքով*

*Զարմացուցին բոլոր աշխարհ ,*

*Բայց իրարու չեն հաւասար .*

*Երկու երեքն անգղլացի ,*

*Մէկ մը աղնիւ իտալացի ,*

*Մէկն ալ է յոյն հին ատենի ,*

*Ամէնքն ալ կազ՝ բայց անուանի :*

ՎՐԻՊԱԿ ՏՊԱԳՐԻ .

Էջ 95. Սխալ է ,

« Թուրքիցի բարեկամէ մը լսեցի թէ Թրուս Մուսքրեր, Մոնթէքրիստ, Հանրի Թրուս, Անթոնի, ու անբաւ ուրիշ վիպասանութիւններ ըլլաւ թատրերգութիւններ գրողներ՝ վաղով վաղով են եղեր որ այն մեծամունչ հեղինակին ձեռքէն ելած երշիկներն ուտեն տեսնեն թէ ինչ համ պիտի առնան : »

Կարդա .

« Թուրքիցի բարեկամէ մը լսեցի թէ վաղով վաղով են եղեր՝ որ Թրուս Մուսքրեր, Մոնթէքրիստ, Հանրի Թրուս, Անթոնի, ու անբաւ ուրիշ վիպասանութիւններ եւ թատրերգութիւններ գրող այն մեծամունչաւ հեղինակին ձեռքէն ելած երշիկներն ուտեն տեսնեն թէ ինչ համ պիտի առնան : »